ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ ԵՎ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՈԼԱՐ ՆՎԻՐԱԲԵՐԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 30 հունիսի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը մեծ գոհունակությամբ հայտնում է, որ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության համար ազգային բարերարներ Լուիզ Սիմոն և Ռիչարդ Մանուկյանները նվիրաբերել են ևս 2 մլն ամերիկյան դոլար: Հայ Եկեղեցու նվիրյալների կողմից սա երկրորդ խոշոր նվիրատվությունն է տաճարի շինարարությանը: Իրականացնելով ծնողների՝ երջանկահիշատակ Ալեք և Մարի Մանուկյանների խոստումը, նրանք արդեն իսկ կատարել էին 3 մլն ամերիկյան դոլարի նվիրատվություն:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ամենայն Հայոց երեք Հայրապետների դրոշմն է կրում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով Երևանում նման եկեղեցի կառուցելու մտահղացումն ունեցավ Վազգեն Ա-ը, եկեղեցի, որի հիմնարկեքը կատարվեց երեք տարի առաջ՝ ձեռամբ Գարեգին Ա Կաթողիկոսի: Հունիսի 26-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ նաև եկեղեցու խաչերի օծումը: Եկող տարի, ի նշանավորումն Հայ Եկեղեցու մեծ հոբելյանի, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կմատուցվի առաջին Ս. Պատարագը:

Մինչ այդ Երևանի կենտրոնում շարունակվում է իր չափերով աննախադեպ եկեղեցու շինարարությունը, որի ավարտի համար անհրաժեշտ կլինեն ֆինանսական նոր միջոցներ: Ներկայումս կանգուն է եկեղեցու կմախքը՝ գմբեթներով և օծյալ խաչերով: Մինչև տարեվերջ ավարտին կհասցվեն նաև արտաքին երեսապատման աշխատանքները: